ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/99

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ Վարչապետի աշխատակազմի ներկայացուցիչ

Ն. Պողոսյանի (լիազորագիր, տրված՝ 28.06.2019թ.)

Լ. Գասպարյանի (լիազորագիր, տրված՝ 28.06.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.06.2019թ. թիվ 26/10294-2019 գրությամբ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը՝ պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ վարչապետի աշխատակազմի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 14.06.2019թ. թիվ 02/18.3/27871-2019 գրության հիման վրա, 19.06.2019թ. թիվ 26/10294-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին (հետայսու նաև՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 02.07.2019թ. ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից արտադրանքի շուկայում փորձարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով ս/թ-ի ապրիլի 26-ին հրապարակվել է ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով գնման ընթացակարգի հրավեր (հետայսու՝ հրավեր): Հրավերում առկա պայմանագրի նախագծի N 1 հավելվածով սահմանված է եղել 5 չափաբաժին, իսկ յուրաքանչյուր չափաբաժնում նշված է եղել փորձարկման ենթակա արտադրանքի անվանումը փորձանմուշների քանակը, փորձարկումների տեսակները, ինչպես նաև պահանջ, որ փորձարկումն իրականացնող մարմինը պետք է հավատարմարգրված և նշանակված լինի համաձայն՝ հավատարմագրման մասին օրենքի և 2012թ. սեպտեմբերի 6-ի կառավարության 1201-Ն որոշման: Տվյալ պարագայում, քանի որ ծառայությունների ձեռքբերման ընթացակարգերի կիրառման դեպքում օրենսդիրը չի սահմանել հնարավորություն մասնակիցների համար՝ ներկայացնելու իրենց կողմից առաջարկվող տեխնիկական բնութագրերը և հետագա անցանկալի զարգացումներից խուսափելու ակնկալիքով՝ ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի /գործում առկա է/ «ծառայության անվանումը» դաշտում նշվել է յուրաքանչյուր չափաբաժնի մասով այն փորձարկումների տեսակները, որոնց համար Ընկերությունը վերը նշված իրավանորմերի համաձայն հավատարմագրված է և նշանակված ու հնարավորությունն ունի իրականացնելու: Նման քայլով Ընկերությունն ակնկալել է, որ Պատվիրատուն կամ կմերժի Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը՝ հաշվի առնելով, որ Ընկերության կողմից առաջարկվում է Հրավերի պայմանագրի նախագծի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով առաջարկված տեխնիկական բնութագրից տարբերվող տեխնիկական բնութագիր, իսկ չափաբաժինների անվանումները

չեն համապատասխանում հրավերով սահմանված չափաբաժինների անվանումներին և փաստացի Ընկերության կողմից առաջարկվել է այլ ծառայության տեսակ կամ Պատվիրատուն կընդունի Ընկերության առաջարկը տվյալ փորձարկումների մասով և հետագայում պայմանագիրը կնքվի միայն առաջարկված փորձարկումների տեսակների իրականացման համար:

Արդյունքում Պատվիրատուի կողմից Ընկերությունը չճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած, իսկ այնուհետև նաև ընտրված մասնակից, ինչով փաստացի Պատվիրատուն ընդունել է Ընկերության կողմից ներկայացված առաջարկը:

Ինչից հետո Պատվիրատուն առաջարկել է Ընկերությանը կնքել պայմանագիր՝ ներկայացնելով պայմանագրի նախագծի մի տարբերակ, որում ներառված են եղել ի սկզբանե հրավերի պայմանագրի նախագծի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված բոլոր տեսակի փորձարկումները՝ չնայած այն բանի, որ Ընկերությունը իր կողմից ներկայացված առաջարկում հստակ նշել էր փորձարկումների այն տեսակները, որոնք վերջինս իրավասու էր իրականացնելու:

Ընկերությունը, ստանալով վերը նշված պայմանագրի նախագիծը, խմբագրել է այն, պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում սահմանելով միայն այն տեսակի փորձարկումները, որոնց համար Ընկերության կողմից ներկայացվել էր գնային առաջարկ, ստորագրել այն և ներկայացրել Պատվիրատուին: Սակայն Պատվիրատուի կողմից այն մերժվել է, ինչը գտնում ենք, որ իրավաչափ չէ: Եթե Պատվիրատուն ի սկզբանե համաձայն չի եղել Ընկերության կողմից ներկայացված առաջարկին, ապա նա ուներ բոլոր իրավական լծակները (ՀՀ կառավարության 2017թ.-ի հունիսի 1-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 41-րդ կետ)՝ մերժելու Ընկերության կողմից ներկայացված առաջարկը՝ առանց Ընկերությանը նման իրավիճակում գցելու:

Ընկերությունը գտնում է, որ բացակայում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը, մասնավորապես՝ Ընկերությունը չի հրաժարվել կնքել պայմանագիր, այլ նա համաձայն է կնքել պայմանագիր իր կողմից նախապես ներկայացված պայմաններով, որոնք, ընդունվել են Պատվիրատուի կողմից:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրել է «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/99 ընթացակարգի շրջանակներում 28.06.2019թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Վարչապետի աշխատակազմի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Վարչապետի աշխատակազմը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 14.06.2019թ. թիվ 02/18.3/27871-2019 գրությամբ հայտնել է, որ Վարչապետի աշխատակազմը Հայաստանի Հանրապետության կառավարության ենթակա շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կարիքների համար արտադրանքի շուկայում փորձարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով ս.թ. ապրիլի 26-ին հայտարարել է «ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-19/6» ծածկագրով ընթացակարգ, որի արդյունքում ընտրված մասնակից է ճանաչվել «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն): Սակայն, ընկերության կողմից ստորագրված և պատվիրատուին ներկայացված պայմանագրի նախագծում գնվող ծառայությունների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանել ընթացակարգի հրավերով նախատեսված բնութագրերին, ինչի արդյունքում պատվիրատուն այն վերադարձրել է ընկերությանը՝ առաջարկելով շտկել անհամապատասխանությունը: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված ժամանակահատվածում Ընկերությունը չի ներկայացրել ճշտված պայմանագիրը:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերը, Ընկերությունը զրկվել է «ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-19/6-1» ծածկագրով պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/99 ընթացակարգի շրջանակներում 28.06.2019թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/99 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

1. ՍՑ-ՆԳ-2019/99 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

2. Վարչապետի աշխատակազմի կողմից Վարչապետի աշխատակազմի կարիքների արտադրանքի շուկայում փորձարկման ծառայությունների ձեռքբերման համար հայտարարվել է «ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-19/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն:

3. «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն հայտի թիվ 4 հավելվածով Ընթացակարգի 2-րդ, 3-րդ և 5-րդ չափաբաժինների համար ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը

Հ.Հ	Ծառայության անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
2	**Խաղալիքների 40 փորձանմուշի փորձարկում /հետևյալ ցուցանիշների համար դ.-Նյութեր/** -մինչև 3 տարեկան երեխաների համար մինչև 3 տարեկան երեխաների համար նախատեսված խաղալիքներում բնական մորթու, բնական կաշվի, ապակու, ճենապակու, խավավորված ռետինի, ստվարաթղթի և թղթի, առանց ներքին ծածկոցի 3 մմ և պակաս չափսի խծուծման հատիկների առկայության որոշում և	713 333.33 (յոթ հարյուր տասներեք հազար երեք հարյուր երեսուներեք դրամ երեսուներեք լումա)	142 666.67 (հարյուր քառասուներկու հազար վեց հարյուր վաթսունվեց դրամ վաթսունյոթ լումա)	856 000 (Ութ հարյուր հիսունվեց հազար)

	չխկչխկան խաղալիքներին նման խաղալիքների լցանյութերի որոշում **Ը-քիմիական հատկություններ** -խաղալիքների օգտագործման ժամանակ քիմիական նյութերի առողջությանը վնաս հասցնելու ռիսկի որոշումը (շնչուղիներ, մաշկի, լորձաթաղանթի, աչքերի կամ ստամոքսի մեջ ընկնելու հետևանքով); խաղալիքներից քիմիական նյութերի միգրացիայի մակարդակի և արտազատման որոշում:			
3	***Օծանելիքակոսմետիկական արտադրանքի 24 փորձանմուշի փորձարկում*** Հետևյալ ցուցանիշների համար բ.Ֆիզիկաքիմիական ցուցանիշների որոշում; գ.Մանրէաբանական ցուցանիշների որոշում; դ.Թունավոր տարրերի պարունակության որոշում;	498 000 (չորս հարյուր իննսունութ հազար)	99 600 (իննսունինը հազար վեց հարյուր)	597 600 (հինգ հարյուր իննսունյոթ հազար վեց հարյուր)
5	***Դիզելային վառելիքի 40 փորձանմուշի փորձարկում /հետևյալ ցուցանիշների համար՝*** ***1.Ցետանային թիվը*** ***2. Ծծմբի զանգվածային մասը*** ***3. Բռնկման ջերմաստիճանը փակ հալքանոթում*** ***4. Ֆրակցիոն կազմը***	1 660 000 (մեկ միլիոն վեց հարյուր երեսուներկու հազար)	332 000 (երեք հարյուր երեսուներկու հազար)	1 992 000 (մեկ միլիոն ինը հարյուր իննսուներկու հազար)

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.05.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ որպես հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած միակ մասնակից «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն Ընթացակարգի 2-րդ, 3-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.05.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից:

6. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ որոշվել է «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ համապատասխան չափաբաժինների մասով կնքել պայմանագիր:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 06.06.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրել է, որ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին 20.05.2019թ. էլեկտրոնային ծանուցմամբ ներկայացվել է ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-19/6-1 ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

8. Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից 31.05.2019թ. ներկայացվել են ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-19/6-1 ծածկագրով պայմանագրի ապահովումը և ստորագրված, կնքված պայմանագրի երկու օրինակ, որոնց տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին, ուստի հիմք ընդունելով Օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ կետը պայմանագիրը չի ընդունվել և մասնակցին առաջարկվել է շտկել պայմանագրի անհամապատասխանությունները, սակայն սահմանված ժամկետում Ընկերությունը չի ներկայացրել շտկված պայմանագիր:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.06.2019թ. թիվ 26/10294-2019 գրությունը, Վարչապետի աշխատակազմի 14.06.2019թ. թիվ 02/18.3/27871-2019 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի 02.07.2019թ. գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է: Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս հրավերով սահմանած դեպքերում և կարգով, առաջարկվող գնից բացի, հաշվի են առնվում ոչ գնային այլ չափանիշներ: Ոչ գնային չափանիշները պետք է փոխկապակցված լինեն պայմանագրի առարկայի հետ և դրանց հարաբերական կշիռները ներկայացվեն հրավերի մեջ:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝

1) առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ***<u>ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին</u>***, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ***<u>հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:</u>*** Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև

առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, ***մասնակցի հայտը ենթակա չէ մերժման***, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և տառերով և թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին.

գ. ***մասնակցի գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, <u>սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված</u>:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետի 7.2 ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ ***գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:***

Նույն կետի 7.19 ենթակետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են

անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ***բացառությամբ այն դեպքերի***, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ ***գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան***, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի 8-րդ կետի 8.7-րդ ենթակետի համաձայն՝ մինչև սույն հրավերի 1-ին մասի 8.5 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն ***դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը***:

Վարչապետի աշխատակազմի կողմից Վարչապետի աշխատակազմի կարիքների արտադրանքի շուկայում փորձարկման ծառայությունների ձեռքբերման համար հայտարարվել է «ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-19/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով (այսուհետ՝ Տեխնիկական բնութագիր) գնման ենթակա ծառայությունները՝ 2-ին, 3-րդ և 5-րդ չափաբաժինների համար, ներկայացված են հետևյալ տեսքով.

Հ. Հ.	**տեխնիկական բնութագիրը**
2.	**Խաղալիքների 40 փորձանմուշի փորձարկում** 1.Փորձարկման իրականացում՝ Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 798 որոշմամբ հաստատված «Խաղալիքների անվտանգության մասին» ՄՄ ՏԿ 008/2011 տեխնիկակական կանոնակարգի պահանջներին համապատասխան: 2. Ներկայացվող պահանջները, ըստ՝ **ա. Խաղալիքների անվտանգությունը՝ պայմանավորված կիրառվող նյութերի**: **բ. Խաղալիքների անվտանգությունը՝ կապված խաղալիքի օգտագործման հետ**: **գ. Ֆիզիկական և մեխանիկական հատկությունները՝** - խաղալիքներում լազերային ճառագայթման համակարգերի առկայություն; - խաղալիքների և դրա բաղադրիչ մասերի, ներառյալ ամրակման դետալները, դիմակայունության որոշում; - փափուկ լցվածքով խաղալիքների կարերի ամրության որոշում; - ջրի մակերևութին երեխայի մարմինը պահելու համար նախատեսված խաղալիքի հերմետիկություն, ամրության որոշում;

	- երեխայի զանգվածը տանող և երթևեկության համար նախատեսված խաղալիքի ամրության և կայունության որոշում (բացի երկանիվ հեծանիվներից); - արձակման մեխանիզմի օգնությամբ արտանետվող սարքով խաղալիքի, ինչպես նաև կինետիկական էներգիա ունեցող սարքի ազդեցության վորոշում (երեխայի և (կամ) նրան հսկող անձին վնասվածքներ պատճառելու տեսանկյունից); - տաքացնող տարրեր պարունակող խաղալիքի շփման համար մատչելի բոլոր մակերևույթների ջերմաստիճանի որոշում; - տաքացնող տարրեր պարունակող խաղալիքի ինֆրակարմիր ճառագայթման ինտեգրալ հոսքի ուժգնության մակարդակի որոշում; - խաղալիքում պարունակվող հեղուկների, գոլորշիների կամ գազերի հեռացման դեպքում ջերմաստիճանի կամ ճնշման արժեքների որոշում; - օպտիկական խաղալիքի երեխայի տեսողության վրա ազդեցության որոշում; - երեխայի տեսողական օրգանների վրա լուսադիոդների օգտագործմամբ խաղալիքների ազդեցության որոշում: **դ. Նյութեր՝** - խաղալիքներում օգտագործվող նյութերում աղտոտումների առկայությունը և վարակազերծությունը; - մինչև 3 տարեկան երեխաների համար նախատեսված խաղալիքներում բնական մորթու, բնական կաշվի, ապակու, ճենապակու, խավավորված ռետինի, ստվարաթղթի և թղթի, առանց ներքին ծածկոցի 3 մմ և պակաս չափսի խծուծման հատիկների առկայության որոշում և չխկչխկան խաղալիքներին նման խաղալիքների լցանյութերի որոշում; - մինչև 3 տարեկան երեխաների համար նախատեսված խաղալիքներում 1-ին դասի վտանգավորության քիմիական նյութերի միգրացիայի որոշում; - խաղալիքներում գործածության մեջ եղած նյութերի կրկնակի վերամշակման արդյունքում ստացված երկրորդային հումքի կիրառման որոշում; - խաղալիքների պաշտպանիչ-դեկորատիվ ծածկույթի կայունության որոշումը՝ խոնավ մշակման, թքի և քրտինքի ազդեցության նկատմամբ; - խաղալիքների անվտանգության որոշում (նախագծվածության և պատրաստվածության տեսանկյունից): **ե. Զգայորոշման ցուցանիշները՝** - Խաղալիքների հիգիենիկ անվտանգության զգայորոշման ցուցանիշների որոշում; **զ. Ֆիզկական գործոնները՝** - թրթռման աղբյուր ունեցող խաղալիքներում տեղային թրթռման մակարդակի որոշում; - հնչյունավորված խաղալիքներում ձայնի մակարդակի որոշում: **է. Բոցավառելիություն՝** - հրդեհաանվտանգության որոշում (փափուկ լցվածքով խաղալիքների, կառնավալային կոստյումների և կառնավալային խաղալիքային արտադրատեսակների (օրինակ՝ մորուքները, բեղերը, կեղծամները, դիմակները, թագերը), ինչպես նաև այն խաղալիքների, որոնցում կարող է տեղավորվել երեխան); - քիմիական նյութեր ներառող և քիմիական փորձերի համար նախատեսված լրակազմերին չվերաբերող խաղային լրակազմում պարունակվող նյութերի կամ ռեակտիվների (որոնք խառնման դեպքում կարող են բոցավառվել, ինչպես նաև առաջացնել վնասակար գոլորշիներ կամ գազեր) առկայության որոշում; - խաղալիքի պայթյունավտանգության որոշում; - խաղալիքներում, ներառյալ քիմիական խաղալիքները, տաքացման, ինչպես նաև օքսիդացնող նյութերի հետ միացնելու դեպքում առաջացող ռեակցիայի հետևանքով պայթուցիկ խառնուրդներ առաջացնող նյութերի առկայության որոշում;

	- խաղալիքներում, ներառյալ քիմիական խաղալիքները, օդի հետ գոլորշիների բոցավառվող կամ պայթունավտանգ խառնուրդներ առաջացնող նյութերի առկայության որոշում: **ը. Քիմիական հատկությունները** - խաղալիքների օգտագործման ժամանակ քիմիական նյութերի առողջությանը վնաս հասցնելու ռիսկի որոշումը (շնչուղիներ, մաշկի, լորձաթաղանթի, աչքերի կամ ստամոքսի մեջ ընկնելու հետևանքով); - խաղալիքներից քիմիական նյութերի միգրացիայի մակարդակի և արտազատման որոշում: **թ. Թունաբանահիգիենիկ ցուցանիշները՝** - խաղալիքների հիգիենիկ անվտանգության թունաբանահիգիենիկ ցուցանիշների որոշում: **ժ. Էլեկտրական հատկությունները՝** - էլեկտրական խաղալիքում, ինչպես նաև դրա բաղադրիչ մասերի վրա անվանական լարման ցուցանիշների որոշում; - էլեկտրական էներգիայի աղբյուրի հետ շփվող կամ շփվելու կարողություն ունեցող խաղալիքների դետալների, ինչպես նաև մալուխների, հաղորդալարերի մեկուսացվածության և մեխանիկորեն պաշտպանվածության որոշում (էլեկտրական հոսանքով վնասվելու ռիսկը բացառելու նպատակով); - ռադիոկառավարվող, էլեկտրոնային և էլեկտրատեխնիկական խաղալիքների էլեկտրաստատիկ, էլեկտրամագնիսական և էլեկտրական դաշտերի լարման մակարդակների որոշում: **ի. Ճառագայթային անվտանգություն՝** - բնական մետաղներից պատրաստված խաղալիքների ճառագայթային անվտանգության ցուցանիշների որոշում (բնական ռադիոնուկլիդների տեսակարար արդյունավետ ակտիվություն): **լ. Միկրոկենսաբանական ցուցանիշները** - խաղալիքների հիգիենիկ անվտանգության միկրոկենսաբանական ցուցանիշների որոշում: **3. Համապատասխանության գնահատման մարմինը պետք է լինի հավատարմագրված և նշանակված համաձայն հավատարմագրման մասին օրենքի և 2012թ սեպտեմբերի 6-ի կառավարության 1201-Ն որոշման:** **4.**Փորձարկումների իրականացում համաձայն տեխնիկական կանոնակարգի կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկում ընդգրկված ստանդարտներին համապատասխան:
3.	***Օծանելիքակոսմետիկական արտադրանքի 24 փորձանմուշի փորձարկում*** 1. Փորձարկման իրականացում՝ Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 23–ի թիվ 799 որոշմամբ հաստատված «Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին» ՄՄ ՏԿ 009/2011 տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան: 2. Ներկայացվող պահանջները, ըստ՝ ա. Բաղադրության որոշում; բ. Ֆիզիկաքիմիական ցուցանիշների որոշում; գ. Մանրէաբանական ցուցանիշների որոշում;

	դ. Թունավոր տարրերի պարունակության որոշում; ե. Թունաբանական ցուցանիշների որոշում; զ. Կլինիկական (կլինիկալաբորատոր) ցուցանիշների որոշում: 3. Համապատասխանության գնահատման մարմինը պետք է լինի հավատարմագրված և նշանակված համաձայն հավատարմագրման մասին օրենքի և 2012թ սեպտեմբերի 6-ի կառավարության 1201-Ն որոշման: 4.Փորձարկումների իրականացում համաձայն տեխնիկական կանոնակարգի կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկում ընդգրկված ստանդարտներին համապատասխան:
5.	**Դիզելային վառելիքի 40 փորձանմուշի փորձարկում** Ցետանային թիվը 51-ից ոչ պակաս և 2000մգ/կգ-ից ոչ ավելի ծծմբի զանգվածային մասով և առանց <<յուղման ունակություն>> և <<պոլիցիկլիկ արոմատիկ ածխաջրածինների զանգվածային մաս>> ցուցանիշների նորմավորման: ծծմբի զանգվածային մասը, ոչ ավելի 10մգ/կգ-ից, բռնկման ջերմաստիճանըփակ հալքանոթում, ոչ ցածը 55 C-ից, ֆրակցիոն կազմը՝ ծավալայինների 95 տոկոսը թորվում է ջերմաստիճանային պայմաններում, ոչ բարձր 360 C-ից, պոլիցիկլիկ արոմատիկ ածխաջրածինների զանգվածային մասը, ոչ ավելի 8%, յուղման ունակությունը, ոչ ավելի 460 մկմից, դիզելային վառելիքում թույլատրվում է ճարպաթթուների մեթիլային եթերների պարունակությունը ոչ ավելի քան 7% (ըստ ծավալի): Դիզելային վառելիքում չի թույլատրվում մետաղ պարունակող հավելանյութերի օգտագործումը՝ բացառությամբ հակաստատիկ հավելանյութերի: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 826 որոշմամբ հաստատված ՄՄ ՏԿ 013/2011 կանոնակարգի <<Ավտոմոբիլային եւ ավիացիոն բենզինին, դիզելային եւ նավերի համար նախատեսված վառելիքին, ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքին եւ մազութին ներկայացվող պահանջների մասին>>: 3. Համապատասխանության գնահատման մարմինը պետք է լինի հավատարմագրված և նշանակված համաձայն հավատարմագրման մասին օրենքի և 2012թ սեպտեմբերի 6-ի կառավարության 1201-Ն որոշման: 4.Փորձարկումների իրականացում համաձայն տեխնիկական կանոնակարգի կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկում ընդգրկված ստանդարտներին համապատասխան:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն, ով հայտի թիվ 4 հավելվածով Ընթացակարգի 2-րդ, 3-րդ և 5-րդ չափաբաժինների համար ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը

Հ.Հ	Ծառայության անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
2	**Խաղալիքների 40 փորձանմուշի փորձարկում /հետևյալ ցուցանիշների համար դ.-Նյութեր/** -մինչև 3 տարեկան երեխաների համար մինչև 3 տարեկան երեխաների համար նախատեսված խաղալիքներում բնական մորթու, բնական կաշվի, ապակու, ճենապակու, խավավորված ռետինի, ստվարաթղթի և թղթի, առանց ներքին ծածկոցի 3 մմ և պակաս չափսի խծուծման հատիկների առկայության որոշում և չխկչխկան խաղալիքներին նման խաղալիքների լցանյութերի որոշում **Ը-քիմիական հատկություններ** -խաղալիքների օգտագործման ժամանակ քիմիական նյութերի առողջությանը վնաս հասցնելու ռիսկի որոշումը (շնչուղիներ, մաշկի, լորձաթաղանթի, աչքերի կամ ստամոքսի մեջ ընկնելու հետևանքով); խաղալիքներից քիմիական նյութերի միգրացիայի մակարդակի և արտազատման որոշում:	713 333.33 (յոթ հարյուր տասներեք հազար երեք հարյուր երեսուներեք դրամ երեսուներեք լումա)	142 666.67 (հարյուր քառասուներկու հազար վեց հարյուր վաթսունվեց դրամ վաթսունյոթ լումա)	856 000 (Ութ հարյուր հիսունվեց հազար)
3	***Օծանելիքակոսմետիկական արտադրանքի 24 փորձանմուշի փորձարկում*** Հետևյալ ցուցանիշների համար բ.Ֆիզիկաքիմիական ցուցանիշների որոշում; գ.Մանրէաբանական ցուցանիշների	498 000 (չորս հարյուր իննսունութ հազար)	99 600 (իննսունինը հազար վեց հարյուր)	597 600 (հինգ հարյուր իննսունյոթ հազար վեց հարյուր)

	որոշում; դ.Թունավոր տարրերի պարունակության որոշում;			
5	***Դիզելային վառելիքի 40 փորձանմուշի փորձարկում /հետևյալ ցուցանիշների համար՝*** ***1.Ցետանային թիվը*** ***2. Ծծմբի զանգվածային մասը*** ***3. Բռնկման ջերմաստիճանը փակ հալքանոթում*** ***4. Ֆրակցիոն կազմը***	1 660 000 (մեկ միլիոն վեց հարյուր երեսուներկու հազար)	332 000 (երեք հարյուր երեսուներկու հազար)	1 992 000 (մեկ միլիոն ինը հարյուր իննսուներկու հազար)

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.05.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ որպես հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած միակ մասնակից «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն Ընթացակարգի 2-րդ, 3-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.05.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ որոշվել է «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ համապատասխան չափաբաժինների մասով կնքել պայմանագիր:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 06.06.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրել է, որ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին 20.05.2019թ. էլեկտրոնային ծանուցմամբ ներկայացվել է ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-19/6-1 ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից 31.05.2019թ. ստորագրված և կնքված Պատվիրատուին է ներկայացվել պայմանագրի նախագիծը, որի N 1 Հավելվածով՝ թիվ 2-րդ, 3-րդ և 5-րդ չափաբաժինների համար, տեխնիկական բնութագիրը ներկայացվել է հետևյալ տեսքով

Հ.Հ	Ծառայության անվանումը
1	*2*
2	**Խաղալիքների 40 փորձանմուշի փորձարկում /հետևյալ ցուցանիշների համար դ.- Նյութեր/** -մինչև 3 տարեկան երեխաների համար մինչև 3 տարեկան երեխաների համար նախատեսված խաղալիքներում բնական մորթու, բնական կաշվի, ապակու, ճենապակու, խավավորված ռետինի, ստվարաթղթի և թղթի, առանց ներքին ծածկոցի 3 մմ և պակաս չափսի խծուծման հատիկների առկայության որոշում և չխկչխկան խաղալիքներին նման խաղալիքների լցանյութերի որոշում **քիմիական հատկություններ** -խաղալիքների օգտագործման ժամանակ քիմիական նյութերի առողջությանը վնաս հասցնելու ռիսկի որոշումը (շնչուղիներ, մաշկի, լորձաթաղանթի, աչքերի կամ ստամոքսի մեջ ընկնելու հետևանքով); խաղալիքներից քիմիական նյութերի միգրացիայի մակարդակի և արտազատման որոշում: 3.Համապատասխանության գնահատման մարմինը պետք է լինի հավատարմագրված և նշանակված համաձայն հավատարմագրման մասին օրենքի և 2012թ սեպտեմբերի 6-ի կառավարության 1201-Ն որոշման: 4.Փորձարկումների իրականացում համաձայն տեխնիկական կանոնակարգի կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկում ընդգրկված ստանդարտներին համապատասխան:
3	***Օծանելիքակոսմետիկական արտադրանքի 24 փորձանմուշի փորձարկում*** Հետևյալ ցուցանիշների համար բ.Ֆիզիկաքիմիական ցուցանիշների որոշում; գ.Մանրէաբանական ցուցանիշների որոշում; դ.Թունավոր տարրերի պարունակության որոշում; 3.Համապատասխանության գնահատման մարմինը պետք է լինի հավատարմագրված և նշանակված համաձայն հավատարմագրման մասին օրենքի և 2012թ սեպտեմբերի 6-ի կառավարության 1201-Ն որոշման: 4.Փորձարկումների իրականացում համաձայն տեխնիկական կանոնակարգի կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկում ընդգրկված ստանդարտներին համապատասխան:

5	***Դիզելային վառելիքի 40 փորձանմուշի փորձարկում /հետևյալ ցուցանիշների համար՝*** ***Ցետանային թիվը*** ***Ծծմբի զանգվածային մասը*** ***Բռնկման ջերմաստիճանը փակ հալքանոթում*** ***Ֆրակցիոն կազմը*** 3.Համապատասխանության գնահատման մարմինը պետք է լինի հավատարմագրված և նշանակված համաձայն հավատարմագրման մասին օրենքի և 2012թ սեպտեմբերի 6-ի կառավարության 1201-Ն որոշման: 4.Փորձարկումների իրականացում համաձայն տեխնիկական կանոնակարգի կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկում ընդգրկված ստանդարտներին համապատասխան:

Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից 31.05.2019թ. ներկայացվել են ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-19/6-1 ծածկագրով պայմանագրի ապահովումը և ստորագրված, կնքված պայմանագրի երկու օրինակ, որոնց տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին, ուստի հիմք ընդունելով Օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ կետը պայմանագիրը չի ընդունվել և մասնակցին առաջարկվել է շտկել պայմանագրի անհամապատասխանությունները, սակայն սահմանված ժամկետում Ընկերությունը չի ներկայացրել շտկված պայմանագիր:

Այսպիսով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս ուսումնասիրելով «ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-19/6-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի տեխնիկական բնութագիրը՝ սույն գործի քննության առարկա հանդիսացող չափաբաժինների մասով, «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից հայտի թիվ 4 հավելվածով ներկայացված գնային առաջարկը և Ընկերության կողմից կնքված, ստորագրված և Պատվիրատուին ներկայացված պայմանագրի նախագիծը, արձանագրում եմ հետևյալը.

Ընկերության կողմից հայտի թիվ 4 հավելվածով՝ գնային առաջարկով և Ընկերության կողմից կնքված, ստորագրված և Պատվիրատուին ներկայացված պայմանագրի նախագծի թիվ 1 Հավելվածով հաստատված տեխնիկական բնութագրերը նույնական են, այսինքն՝ Ընկերության կողմից ի սկզբանե ներկայացված գնային առաջարկով առաջարկվել է Հրավերի պայմանագրի նախագծի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական

բնութագրից տարբերվող գնման առարկա, այսինքն՝ Ընկերության կողմից յուրաքանչյուր չափաբաժնի մասով ներկայացվել է գին հրավերի տեխնիկական բնութագրի միայն այն փորձարկումների տեսակների համար, որոնք որ վերջինս պատրաստվում էր իրականացնել պայմանագիրը կնքելուց հետո:

Փաստացի Ընկերությունը չի հրաժարվել պայմանագիր կնքելուց, ավելին 31.05.2019թ. Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացրել կնքված և ստորագրված պայմանագրի նախագիծ իր կողմից նախապես գնային առաջարկով ներկայացված պայմաններով, որոնք, որ ի սկբանե ընդունվել են Պատվիրատուի կողմից և վերջինս ճանաչվել է ընտրված մասնակից:

Այսպիսով, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են ***գնային առաջարկը*** և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ***ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:***

Այսպես վերը նշված նորմերը հստակ սահմանում են, որ այն դեպքում, երբ գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին, ապա այն ենթակա է մերժման և տվյալ դեպքում Կարգի 41-րդ կետով նախատեսված շտկման հնարավորությունը չի գործում:

Նման պայմաններում գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ի սկզբանե հայտերի գնահատման նիստում պետք է մերժեր Ընկերության հայտը, քանի որ վերջինիս կողմից գնային առաջակը ներկայացվել է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նման պայմաններում, գտնում եմ, որ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն «ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-19/6-1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել ստանձնած պարտավորության խախտում, հետևաբար Ընկերությանը գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.06.2019թ. թիվ 26/10294-2019 գրությամբ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**